ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2018-2019 ուսումնական տարում մարզում գործել են 5 ավագ, 86 միջնակարգ և 21 հիմնական դպրոցներ: Մարզային ենթակայության 107 հանրակրթական դպրոցներում կրթություն է ստացել 34049 աշակերտ: 2871 աշակերտ ավարտել է 9-րդ, 1226-ը՝ 12-րդ դասարանները:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 462 երեխաների համար մարզի 24 դպրոցներում իրականացվել է ներառական կրթություն:

Մարզային ենթակայության 107 դպրոցում աշխատում է 4565 աշխատող, որոնցից 2606-ը ուսուցիչներ են, 272-ը աշխատում է մանկավարժական հաստիքներով, իսկ մնացած 1687-ը վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատողներ են:

Ուսուցչական անձնակազմի հիմնական ուսումնական ծանրաբեռնվածությունը մարզում կազմում է 18,9 ժամ, աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությունը՝ 13.0, դասարանների միջին խտությունը՝ 20.6 աշակերտ:

Մանկավարժական դրույքների թիվը 2240 է:

2018- 2019 ուսումնական տարում ուսման տարեկան առաջադիմությունը մարզի հանրակրթական դպրոցներում կազմել է 99.7%, ուսման որակը 335,8%:

Հանրակրթական դպրոցներում սովորող 4156 աշակերտ արժանացել է գովասանագրերի, 21 աշակերտ՝ հատուկ նմուշի վկայականի, մեկ աշակերտ պարգևատրվել գերազանցության մեդալով (Նոր Խարբերդի թիվ 1 հիմնական դպրոց):

Աշակերտների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլին մասնակցած 77 աշակերտներից մեկը՝ արժանացել է առաջին կարգի դիպլոմի, չորսը՝ 2-րդ կարգի, վեցը՝ 3-րդ կարգի դիպլոմի, տասնչորսը՝ գովասանագրի:

Անցած ուսումնական տարում 9-րդ ավարտական դասարանում մարզում կազմակերպվեց կենտրոնացված ավարտական քննություն հայոց լեզու առարկայից: Քննությանը մասնակցած 2810 աշակերտներից 260-ը (9,2%) ստացել էին անբավարար գնահատական, իսկ 1,3 %-ը (38 աշակերտ) ստացել են 18-20 միավոր:

Դպրոցական սնունդ ծրագրի իրականացման համար պետական միջոցների հաշվին մարզին 2019 թվականի համար հատկացվել է շուրջ 329.6 մլն. դրամ գումար(մեկ երեխայի համար 140 դրամ):

Ծրագրի շրջանակներում մարզային ենթակայության 107 հանրակրթական դպրոցների տարրական դասարանների և դպրոցներին կից գործող նախակրթարանների 15320 երեխաների տրվել է դպրոցական սնունդ: Դպրոցական սնունդ ծրագրի շրջանակներում մարզի Վերին Արտաշատի, Վեդի քաղաքի թիվ 1 և Սուրենավանի դպրոցներում գործում են շուրջ 1000 քառակուսի մետր մակերեսով ջերմոցային տնտեսություններ:

Անցած ուսումնական տարվա ընթացքում նպատակային աշխատանք է տարվել աշակերտներին և ուսուցիչներին դասագրքերով, ուսումնական ձեռնարկներով և ծրագրերով ապահովելու ուղղությամբ: ԴՇՀ-ի միջով տպագրված դասագիրքի դիմաց ծնողների կողմից կատարվել է պլանավորված 100,8 մլն. դրամի ներդրում, որը փոխանցվել է դասագրքերի շրջանառու հիմնադրամի դպրոցների բանկային ենթահաշիվներին: Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին դասագրքերով ապահովելու նպատակով պետության կողմից դրամաշնորհի ձևով մարզի դպրոցներին 2018-2019 ուսումնական տարում տրամադրել է 10.1 մլն դրամ գումար:

Հաշվետու ժամանակահատվածում Արարատի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում անցկացվել են շարադրությունների մրցույթներ, կազմակերպվել են սպորտային, գեղագիտական, մշակութային, ստեղծագործական միջոցառումներ:

Մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում պատանիների ռազմահայրենասիրական դաստիարակության համար իրականացվել են տարաբնույթ միջոցառումներ, ռազմամարզական խաղեր, ռազմադաշտային պարապմունքներ, ինքնաձիգով և մարտական փամփուշտներով կրակային պատրաստության պարապմունքներ:

Դասավանդման մեթոդիկայի կատարելագործման նպատակով ամեն տարի մարզի ուսուցիչների 1/5-ը մասնակցել են Կրթության ազգային ինստիտուտի կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:

Անցած ուսումնական տարում կրթության բաժնի կողմից համակարգվել է մարզի 578 ուսուցիչների պարզ ընթացակարգով ատեստավորման նախապատրաստական աշխատանքների կազմակերպման և իրականացման գործընթացը:

Պետական միասնական քննությունները կազմակերպելու համար քննական կենտրոններ է ընտրվել Արտաշատ քաղաքի N1 և N4 հիմնական դպրոցները: 2019 թվականի բուհ ընդունվելու համար դիմում հայտ է ներկայացրել մարզի հանրակրթական դպրոցների 690 շրջանավարտ: Դիմորդներից 594-ը /86%/ ընդունվել են բարձրագույն ուսումնական հաստատություններ:

Մարզում առկա խնդիրներ, որոնք նոր ուսումնական տարում լուծման կարիք ունեն:

1. Անհանգստացնողն այն է, որ դպրոցներում ՆԶՊ և շախմատ դասավանդող մասնագետներից ոչ բոլորն ունեն մանկավարժի որակավորում, հետևաբար դպրոցների տնօրենները լուրջ խնդիր ունեն նրանց զինելու մեթոդա-մանկավարժական հմտություններով:
2. Նկատվում են չհիմնավորված էական տարբերություններ տարբեր դպրոցների միևնույն հաստիքով աշխատողների դրույքաչափերի միջև: Դպրոցի կենտրոնական օղակը ուսուցիչն է, և մյուս բոլոր աշխատողների դրույքաչափերը համեմատական պետք է լինեն դպրոցի մանկավարժական դրույքաչափին: Դպրոցի տնօրենները դրույքաչափերը ձևավորելիս պետք է հաշվի առնեն նաև դպրոցում սովորող աշակերտների թվաքանակը և դպրոցի որակական ցուցանիշները:

3. Լուրջ խնդիրներ են ծագել ուսուցիչներին մեկ դրույք ժամաքանակով ապահովելու գործում: Ուսուցիչներին մեկ դրույքով ապահովվելու համար անհրաժեշտ է կրճատել շուրջ 345 ուսուցչի, որը մարզում կառաջացնի սոցիալական լուրջ խնդիր:

Օպտիմալացման անհրաժեշտություն է առաջացել գրեթե բոլոր դպրոցներում: Դպրոցներում գրեթե չի կատարվում սերնդափոխություն, մանկավարժական կոլեկտիվների ծերացումը խիստ նկատելի է: Ցավալի է, որ մարզում հարյուրավոր նորավարտ, նույնիսկ մանկավարժական բուհերը գերազանցությամբ ավարտած շրջանավարտներ այսօր զրկված են աշխատելու հնարավորությունից: Խիստ հարգելով և բարձր գնահատելով մեր դպրոցներում աշխատող 182 կենսաթոշակային տարիք ունեցող մանկավարժներին՝ կարծում եմ, որ դպրոցների տնօրենները բարձր մակարդակով պետք է կազմակերպեն մեր մանկավարժներին վաստակած հանգստի ուղարկելու արարողությունները՝ ստեղծելով հնարավորություն բարձրացնելու մնացած ուսուցիչներին ուսումնական ծանրաբեռնվածությունը:

<u>Հիմնախնդիրներ</u>

1. Կրթության գործող օրենսդրությամբ ոլորտը կարգավորող իրավական շատ փաստաթղթեր թերի են՝ մասնավորապես ուսուցչի մրցույթի անցկացման, տնօրենի ընտրության կագերը, դպրոցի ֆինանսավորման մեխանիզմը, դպրոցի սպասարկող և ուսումնաօժանդակ անձնակազմի համար տիպային՝ աշակերտների թվին համարժեք հաստիքացուցակի բացակայությունը: Անընդունելի է շախմատ և ՆԶՊ առարկաների ուսուցիչների ընտրության ժամանակ մանկավարժական որակավորման պահանջի

բացակայությունը:

Կարծես թե անհրաժեշտություն է առաջացել կրթության օրենսգիրք ունենալու պահանջը, որտեղ կկանոնակարգվի կրթության համակարգին առնչվող յուրաքանչյուր տարր:

Մասնավորապես առաջարկում ենք ուսուցչի թափուր տեղի համար 2 անգամ հայտարարված մրցույթին հավակնորդ չլինելու դեպքում 3-րդ մրցույթին թույլատրել մասնակցել համապատասխան /հատուկ՝Մանկավարժական բուհերի կողմից կազմակերպված/ վերապատրաստում անցած հարակից առարկաների մասնագետներին:

2. Երեխաների տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով անհրաժեշտ է բեռնաթափել ուսումնական պլանները: Սահմանափակել դպրոցում ուսումնասիրվող առարկաների ցանկը՝ կարևորություն տալով հիմնարար առարկաներին

/գործող ուսումնական պլանով միջին դպրոցում ուսումնասիրվում է 18 առարկա/: